

CMT մոդելը մշակվել է Կառավարման զարգացման կանադական կենտրոնի կողմից և կիրառվել պետական հատվածի կողմից մատուցվող ծառայությունների որակի և դրանց նկատմամբ բնակչության բավարարվածության գնահատականներ ստանալու համար, ինչը ծառայելու էր հանրային ծառայությունների որակի բարելավման ու դրա գերակա ուղղությունների որոշման նպատակին:

Այս մոդելում հարցումների միջոցով գնահատվում են.

- ծառայությունների որակը պայմանավորող առանձին գործոնների (բաղադրիչների) վերաբերյալ բնակչության սպասումները,
- այդ գործոնների վերաբերյալ (ծառայություններից օգտվելու) սպառողների փորձը,
- տվյալ ծառայության որակի առանձին տարրերի նշանակալից լինելու մակարդակը,
- որակի առանձին տարրերի նկատմամբ բավարարվածության մակարդակը,
- հարցման մասնակիցների կարծիքով բարելավման կարիք ունեցող ծառայության որակի գործոնները:

Ինչպես տեսնում ենք, այս մոդելը ներառում է հանրային ծառայությունների հետազոտության տարբեր ուղղություններ, այն առավել կատարելագործված է և տալիս է ավելի լայն շրջանակի հարցերի պատասխաններ:

CMT մոդելը կարող է արդյունավետ կիրառություն ունենալ նաև ՀՀ համայնքներում հանրային ծառայությունների մատուցման որակի գնահատման, առանձին-առանձին ծառայությունների որակը պայմանավորող բարելավման կարիք ունեցող գործոնների որոշման և բարելավման ուղղությունների մշակման գործընթացներում:

ՎԱՅԱՆ ԲԱԲԱՅԱՆ

*ՀՀ ԳԱՍ Մ. Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի հայցորդ*

ԱՎԱՆՂՆԵՐԻ ԱՊԱՅՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Ավանդների ապահովագրության համակարգը գործնականում ունի տնտեսական և սոցիալական բնույթի կարևոր նշանակություն: Սույն հոդվածի շրջանակներում փորձ է արվել անդրադարձ կատարել Հայաստանի Հանրապետության ավանդների ապահովագրման համակարգի (այսուհետ՝ համակարգ) հիմնախնդիրներին և դրանց լուծման ուղիներին տնտեսության զարգացման տեսանկյունից:

Շուկայական տնտեսության մեջ կարևորվում է համակարգի արդյունավետ գործունեությունը, որը յուրօրինակ «բարձիկի» դեր է կատարում ֆինանսական համակարգի կայունության ապահովման գործում:

Հայաստանի Հանրապետությունում ավանդների ապահովագրության համակարգը կարգավորվում է «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի հիմնադրույթներով՝ ուղղված հասարակության գլխավորապես ցածր եկամուտներ ունեցող խավի ավանդների ապահովմանը՝ տեսադաշտից դուրս թողնելով տնտեսության զարգացման և բանկային համակարգի հուսալիության ապահովման հիմնախնդիրները:

Ավանդների ապահովագրության համակարգի առկայությունը Հայաստանի Հանրապետությունում արդեն իսկ դրական երևույթ է: Սակայն գոյություն ունեն խնդիրներ, որոնց լուծումը

լրացուցիչ խթան կարող է դառնալ տնտեսության զարգացման գործում բանկերի մասնակցության արդյունավետության բարձրացման համար:

Նմանատիպ խնդիրներից են.

1. Պարբերական երաշխիքային վճարների գործող մոտեցումը

Հայաստանի Հանրապետությունում գործող բանկերը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծված օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի և անվճարունակ բանկերի, պարտավոր են օրենքով սահմանված կարգով Ավանդների հատուցման հիմնադրամին վճարել պարբերական, միանվագ և լրացուցիչ երաշխիքային վճարներ: Երաշխիքային վճարների հաշվարկման կարգը սահմանում է ՀՀ կենտրոնական բանկը¹:

Հայաստանի Հանրապետության բանկերի կողմից պարբերական երաշխիքային վճարները կատարվում են եռամսյակը մեկ անգամ, որը կազմում է հաշվետու եռամսյակի՝ տվյալ բանկի բանկային ավանդների միջին օրական ցուցանիշի 0,05 տոկոսը, սակայն տարեկան մեկ միլիոն դրամից ոչ պակաս:

Ներկայումս Հայաստանի ավանդների ապահովագրության համակարգում գործող՝ պարբերական երաշխիքային վճարների հաստատուն մոտեցումը անհավասար պայմաններ է ձևավորում բանկային համակարգում, և այն չի խրախուսում բանկերի գործունեության հուսալիության բարձրացումը, քանի որ անկախ ռիսկերի նվազեցման արդյունավետությունից բանկերի երաշխիքային ծախսերը աճում են մույն հարաբերակցությամբ, և անվճարունակության փաստի հայտ գալու պարագայում Հիմնադրամն իրականացնում է վճարում: Այնինչ պարբերական երաշխիքային վճարի չափի և ձևի որոշումը գործում ավանդների ապահովագրության համակարգերում պայմանավորված է բանկի ռիսկայնությամբ, և այն արտահայտվում է պարբերական երաշխիքային վճարների տարբերակված մոտեցմամբ:

Հայաստանի Հանրապետությունում պարբերական երաշխիքային վճարների գործող մոտեցումը բանկերի մոտ շարժառիթ չի ձևավորում ռիսկայնության նվազեցման ուղղությամբ, իսկ վերջինս բանկային համակարգի հուսալիության կարևոր նախապայմաններից մեկն է:

Այդ իսկ պատճառով կարևորվում է ավանդների պարբերական երաշխիքային վճարների հաստատուն մոտեցման վերանայման անհրաժեշտությունը:

Բանկային համակարգի արդյունավետ գործունեության գրավականներից կարող է լինել բանկերի ավանդների պարբերական երաշխիքային վճարումների դրույքների սահմանումը ըստ սանդղակի: Նշված առաջարկությունը պահանջում է վերանայել Հայաստանի Հանրապետության ավանդների երաշխավորման համակարգի հայեցակարգը, որում ավանդների պարբերական երաշխիքային վճարների հաստատուն մոտեցման փոխարեն անհրաժեշտ է սահմանել տարբերակված մոտեցում՝ հիմնվելով բանկերի ներքին հսկողության համակարգի գնահատման արդյունքների վրա:

Առաջադրված խնդրի լուծումը հեռանկարում կնպաստի բանկերի ռիսկայնության նվազեցմանը և տնտեսության մեջ բանկերի գործառնությունների արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև բանկերի գործունեության հուսալիության բարձրացման միջոցով հանրության վստահության բարելավմանը:

2. Ավանդների ապահովագրության համակարգի հիմնադրույթներում բանկերի հուսալիության բնութագրիչի՝ բանկերի ռիսկայնության անտեսումը

Բանկային գործունեության առանձնահատկություններից են հասարակության դրամական միջոցների տնօրինումը և այն իր ռիսկով կառավարումը: Բանկերի հուսալի գործունեությունը պայմանավորված է ռիսկերի կառավարման արդյունավետությամբ, որը նաև հասարակության վստահության ձևավորման կարևոր նախապայմաններից է:

¹ «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքը 2004թ.:

Ավանդների ապահովագրության համակարգի հիմնադրույթներում բանկերի ռիսկայնությունը և ընդհանրապես բանկերի ներքին հսկողության համակարգի արդյունավետության գնահատումը մղվել է ետին պլան, որը բացատրվում է Համակարգի ներդրման սկզբնական ժամանակաշրջանի պահանջներով: Տեխնիկապես հարմար է կիրառել վճարումների հաստատումն դրույթի մոտեցումը՝ անտեսելով ներքին հսկողության արդյունավետությունը, սակայն այն անարդարացի է այն բանկերի նկատմամբ, որոնք արդյունավետ են կառավարում բանկային ռիսկերը: Նմանատիպ մոտեցումը չի նպաստում բանկային համակարգի հուսալիության բարձրացմանը:

Սակայն ավանդների ապահովագրության համակարգի առաքելությունը ապահովելու նպատակով հարկավոր է վերանայել գործող հայեցակարգը և հիմնադրույթները կառուցել բանկերի ռիսկայնության հիման վրա:

Բանկերի ռիսկայնությունը պետք է դիտարկել բանկերի ներքին հսկողության համակարգի գնահատման տեսանկյունից:

Ավանդների ապահովագրության համակարգի գոյության անհրաժեշտ տարր է բանկերի կողմից վճարումների դրույթների սանդղակը՝ կախված ներքին հսկողության համակարգի գնահատումից:

Այսպես օրինակ, Ամերիկայի Միացյալ Նահանգների բանկերը դասակարգվում են ըստ կապիտալի և ռիսկայնության 9 դասի՝ մեծ կապիտալ, միջին և փոքր կապիտալ ունեցողների և մեծ ռիսկ, միջին և փոքր ռիսկ ունեցողների: Մեծ կապիտալ և փոքր ռիսկ ունեցող բանկերն ապահովագրավճար չեն կատարում: Մեծ կապիտալ և մեծ ռիսկ պարունակողները վճարում են ավելի բարձր տոկոսադրույթով, քան թե փոքր կապիտալ և փոքր ռիսկ ունեցողները: Նման մոտեցումը ստիպում է բանկերին արդյունավետ կառավարել ռիսկերը, ինչը հնարավորություն է տալիս կրճատել ծախսերը: Ապահովագրվում են ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձանց ավանդները¹:

Ներքին հսկողության համակարգի տեսանկյունից ավանդների ապահովագրության կարգավորման նորմերի ընդունումը կխթանի բանկերի մոտիվացիան ներքին հսկողության համակարգի կատարելագործման և մասնավորապես իրենց ռիսկայնության նվազեցման գործում:

Ռիսկայնության նվազեցումը իր հերթին կանդրադառնա բանկային համակարգի հուսալիության և բանկերի կողմից մատուցվող ծառայությունների արդյունավետության բարձրացման վրա:

3. Երաշխավորվող ավանդների շրջանակները

Հայաստանի Հանրապետության ավանդների ապահովագրության համակարգի հայեցակարգի տեսադաշտից դուրս է մնացել իրավաբանական անձանց, մասնավորապես փոքր ու միջին ձեռնարկությունների /այսուհետ՝ ՓՄՁ/ բանկային ավանդներից բխող ռիսկերի կառավարման հիմնախնդիրը:

ՓՄՁ-ի ավանդների երաշխավորման կարևորության և արդիականության մասին են խոսում Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության տվյալները, համաձայն որի 30 անդամ երկրներում ՓՄՁ-ի մասնաբաժինը կազմում է ձեռնարկությունների ընդհանուր մասնաբաժնի 95%-ը, որոնցում ընդգրկված է ընդհանուր աշխատուժի 60-70%-ը՝ համախմբելով աշխատատեղերի գերակշիռ մասը: Ըստ նույն աղբյուրի վկայակոչած տվյալների՝ Եվրամիության երկրներում զբաղվածության 72%-ը ապահովում են ՓՄՁ-ը, որտեղ ձևավորվում է ՀՆԱ-ի 66%-ը,² իսկ Հայաստանում նույն ցուցանիշը կազմում է ՀՆԱ-ի մոտ 40.3%-ը³:

¹ fdic ինտերնետային կայք:

² Аганбегян А.Г. Социально-экономическое развитие России. – 4-е изд. – М.: Дело, 2006, стр. 175; OECD Small and Medium Enterprise Outlook – 2002 Edition, OECD Publishing, 2002.

³ Ստեփանյան Կ., Աշխատանքի շուկայի զարգացման միտումները, տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման սեղմագիր, Երևան, 2008:

31.09.2007թ. ՀՀ բանկային համակարգի իրավաբանական անձ մեկ հաճախորդին բաժին ընկնող բանկային հաշվի մնացորդը կազմել է 3,9 մլն դրամ, որն ավելին է, քան ընտրանքային կարգով ընտրված ՓՄՁ-ի համանուն հաշվի մնացորդը, օրինակ՝ որպես հաշվետու թողարկող¹ «Ասկե Գրուպ», «Եֆրեզ» և «Էլեկտրոմոնտաժ» ԲԲԸ-ի դրամական միջոցները² չեն գերազանցում 1,9 մլն դրամը: Այսինքն՝ ներկայացվածից կարող ենք եզրահանգել, որ ՓՄՁ-ի գործունեությունը գրեթե դուրս է գտնվում բանկային համակարգի սպասարկման ոլորտից:

Բանկային համակարգի նկատմամբ ՓՄՁ-ի անվտանգության ձևավորման և պասիվության հիմնապատճառներից է բանկերի անվճարունակության պարագայում դրանց պաշտպանվածության անբավարար մակարդակը³:

Աղյուսակ 1

**Լուծարման գործընթացում գտնվող բանկերի պարտավորությունների կառուցվածքը
31.12.2007թ. դրությամբ⁴**

N.	Պարտավորության տեսակը	S/Կ	ՀՆԱ/պահանջ
1	Ֆիզիկական անձանց նկատմամբ	19%	0.09%
2	Առևտրային բանկերի նկատմամբ	9%	0.04%
3	Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նկատմամբ	2%	0.01%
4	ՀՀ նկատմամբ, այդ թվում՝ հարկային պարտավորություններ	5%	0.02%
5	Իրավաբանական անձանց նկատմամբ	47%	0.22%
6	Համայնքների նկատմամբ	0%	0.00%
7	Այլ երկրների պետական կամ համայնքային բյուջեների նկատմամբ	18%	0.09%
8	Այլ պարտավորություններ	0%	0.00%
	Ընդամենը	100%	0.48%

Աղյուսակում ներկայացված ցուցանիշները վկայում են իրավաբանական անձ ավանդատուների անպաշտպանվածության մասին, որը անվտանգության միջավայրի ձևավորման և ստվերային տնտեսության մասշտաբների ընդլայնման նախապայման է դիտվում:

Այդ իսկ պատճառով ՓՄՁ-ը իրենց միջոցները ռիսկային միջավայրից՝ բանկերից, ուղղում են իրենց գնահատման ոչ ռիսկային միջավայր՝ ստվերային տնտեսություն:

Բանկային համակարգի հաճախորդներին և մասնավորապես ՓՄՁ-ին հարկավոր են երաշխիքներ սնանկության դեպքում բանկային ավանդների վերադարձելիության ապահովման համար:

Անցումային տնտեսություն ունեցող երկրներում, ինչպիսին Հայաստանն է, նպատակահարմար է ինչպես ֆիզիկական անձանց, այնպես էլ մանր ու միջին տնտեսավարողների բանկային ավանդներից բխող ռիսկերի կառավարման գործընթացը մասամբ իրականացնել

¹ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենք 2007:

² Հաշվետու թողարկողների կողմից հրապարակված եռամսյակային հաշվետվությունները և ՀՀ կենտրոնական բանկի ինտերնետային կայք www.cba.am:

³ Деньги и кредит (2000 – 6) стр.47-48, Рональд Макдональд: Страхование депозитов: «Guidance for developing effective deposit insurance systems» -Financial Stability Forum:

⁴ ՀՀ կենտրոնական բանկի՝ 12.04.2005թ. թիվ 170 Ն որոշում «Լուծարման գործընթացում գտնվող բանկերի և վարկային կազմակերպությունների լուծարային կառավարիչների կողմից իրենց գործունեության վերաբերյալ տեղեկատվությունների հրապարակման» Կարգ:

միասնական համակարգի կողմից, որով վստահություն կստեղծվի բանկային համակարգի նկատմամբ:

Այսպիսով, տնտեսության հիմնախնդիրների լուծման տեսանկյունից անհրաժեշտություն է առաջանում վերանայել Հայաստանում գործող ավանդների, երաշխավորման համակարգի հայեցակարգը՝ ընդլայնելով երաշխավորման ենթակա ավանդատուների շրջանակները, ընդգրկելով նաև իրավաբանական անձանց, մասնավորապես փոքր ու միջին ձեռնարկությունների /այսուհետ՝ ՓՄՁ/ ավանդների մասնակի երաշխավորման մոտեցումը:

Ավանդների ապահովագրության համակարգում ՓՄՁ-ի բանկային ավանդների երաշխավորման գծով առաջադրված հայեցակարգային փոփոխությունը տնտեսության տեսանկյունից մասնակի կապահովի.

- փոքր և միջին ձեռնարկատիրական գործունեության զարգացումը,
- ստվերային տնտեսության ծավալների կրճատումը,
- պասիվ խնայողությունների ակտիվացումը:

Մանր և միջին տնտեսավարող սուբյեկտների բանկային ավանդների երաշխավորումը և պարբերական երաշխիքային վճարների տարբերակված մոտեցումը, բանկի ներքին հսկողության համակարգի գնահատման հիման վրա, կարող են լրացուցիչ խթանիչ գործոն լինել երկրի տնտեսության զարգացման գործում, ինչպես նաև բանկային համակարգի հուսալիության բարձրացման և ավանդատուների վստահության ձևավորման կարևոր նախապայման:

Ավանդների ապահովագրության հիմնախնդիրները բազմազան են և բազմառեսման, բոլորին հնարավոր չէ անդրադառնալ սույն հոդվածի հարցադրումների շրջանակներում: Սակայն փորձ է կատարվել այդ ամենից տարանջատել և ներկայացնել այն հիմնախնդիրները, որոնք իրենց էությանը առնչություն ունեն սույն հոդվածի հարցադրումներին:

ՎԱՅՄԸ ԲԱԲԱՅԱՆ

ՀՀ ԳԱՄ Մ.Զոթանյանի անվան

տնտեսագիտության ինստիտուտի հայցորդ

ՆԵՐՔԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ (ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

Տնտեսության ֆինանսական հատվածի կայունության ապահովման գործում կարևորվում է ավանդատուների վարքագիծը, որը պայմանավորված է բանկերի գործունեության հուսալիությամբ: Բանկային համակարգի բոլոր հնարավոր հաճախորդներին միավորում է մեկ ընդհանուր ու թերևս կարևորագույն պահանջ. բանկերը պետք է լինեն հուսալի և կառավարելի:

Այս պահանջը գերխնդիր է և այն անհրաժեշտ է ապահովել: Ընդ որում, կարևորվում է ինչպես ամբողջ բանկային համակարգի, այնպես էլ առանձին բանկերի հուսալիության ապահովումը: Սա այն խնդիրն է, որը հնարավոր չէ որոշակի և կոնկրետ քայլերի միջոցով մեկընդմիջ լուծել: Այն լուծելու համար անհրաժեշտ է մշակել հստակ տեսլական, ստեղծել հուսալի հիմքեր ունեցող թափանցիկ ու արդյունավետ համակարգ և անընդհատ կատարելագործել ու վերահսկել այն:

Տնտեսության մեջ առկա ազատ ֆինանսական միջոցների վերաբաշխումը և բանկային ավանդների առկա պոտենցիալի իրացումը մշտապես գոյություն ունեցող խնդիր է, և դրա լուծումը պահանջում է հստակ ուղղորդված ու փոխշաղկապված քայլերի իրականացում: